



49. ԷՐԿՈՒ ՀԸՆԳԵՐ

Ժամանակով մե քյասիբ երիտասարդ տղա, չատ ախկատ ա հըլնում: Որոշում ա էթա Հերևան, ֆանյուլթյուն անա, հիրա գլխը պախա: Մե օր հըլնում ա, մե գարե գընդլ դնում ա ջերն ու բռնում ա Հերևանա ճամբեն:

Էթում ա, էթում ա, խասնում ա Ֆանթալ¹¹, տենում ա՝ էստեղ մե տղա յա նստուկ պատի խովը:

Տենում ա, որ էս տղեն օտարական ա, էթում ա մոտը, բարև ա տալում, խարցնում ա՝ որտեղացի ա, հուր ա էթում: Տենում ա, որ էս տղեն էլ էթում ա ֆանյուլթյուն անելու, հընգեր են հըլնում ու էթում են:

Էթում-խասնում են էլլարա ջուրը: Չարոխները խանում են, թռչում են, ոտները լվում են, դինջնում են:

Էստեղ գարե գընդլ ունեցողը ջերից գընդլը խանում ա, դնում մեչտեղ, հընգերի խես ուտում են:

Էս գընդլ ունեցողի անունը Վարդան էր, իսկ հընգերի անունը՝ Ջաքար: Գնում խասնում են Չանաքո¹² և գիչերը մնում են խանը:

Վարդանը գիչերը տենում ա, որ Ջաքարը ջերից խանեց էրկու լոշ, մեկը ճերավ, մեկը էլի դրեց ջերը:

Մոտցավ Ջաքարին ու ասավ.—Ամո՛թ չեզի, Ջաքա՛ր, որ քո հընգերից գոխտուկ ես խաց ուտում:

Ջաքարն ասում ա.—Բա ինչ ա, կես գարե գընդլ ես տվե, ուզում ես սաղ լոշս ուտե՞ս: Բա չես ուտի:

Էստեղ Վարդանն ասում ա.—Որ էտենց ա, Ջաքա՛ր, արի սեր-բարիչ, հիրարից բաժնվենք, կարող ա մե օր էլի հրրար տենանք, որ խոով չըլենք, հրրար բարև տանք:

—Գնա՛, ո՛չ չեզիկ եմ ուզում, ո՛չ էլ քո բարեն ու բարիլուսը:

Ասում ա ու հերեսը թեքում ա:

Վարդանը, որ տենում ա՝ էս Ջաքարը հեչ մարթ չի, էս խանից դուս ա գալում, էթում ա հուրիչ խան:

¹¹ Ֆանտան գյուղ (Ճ.Ա.):

¹² Զանաքեռ (Ճ.Ա.):

Գիշերը Հինքն Հիրան միթկ ա անում. «Հառավոտ, որ էթամ ֆծյլի բազառը, էլի ընդրա հերեսը կրտենամ, բարե բղի տամ, բարեա չի առնի, լավ չի հըլնի հեչ բազառ էլ չէթամ, ճամբես ծոեմ ու էթամ մե յան, բախտս ինչ կըբերա, կըբերա»:

Ասում ա ու օլըվում մե յան: Դալմի բաղերով բանցըրնում ա սարերի յանը: Էթում ա, էթում ա, ճեսօրին խասնում ա մե քանդուկ ջաղաչի: Մտնում ա ջաղաչը, տենում ա փլավն էփուկ, ընդե դրուկ, հըմա մարթ չըկա: Սպասում ա մե սհաթ, էրկու սհաթ, տենում ա մարթ չըկա: Հինքն էլ անոթի ա, էրկու օր ա բան չի ճերե, փլավից մե չիչ ուտում ա ու հըլնում, մտնում ջաղչի օղումը: Մեկ էլ տենում ա մե ջել, մե առչ ու մե աղվես մոթմոթալով էկան մտան ջաղաչը:

Վարդանի լեղին կըրում ա, Հինքն Հիրան ասում ա. — Հիմի որդեղ որ ա, բուրթս կըզգեն, էս ինչ քյալազ էր հընգա վատ հընգերի հերեսից:

Վարդանն էս էր մտածում, օղումի ծակից հիշկաց, տեսավ ջելն ու առչը պարկան դռան մոտ ու աղվեսին ասին, որ փլավը բերա:

Աղվեսը հելավ փլավը բերեց, հիշկաց տեսավ՝ փլավից մե չիչ ճերեք են, ասավ. — Ախպրտա՛նք, մեր փլավին դիբնող ա հելե, մե չիչ ճերեք են, հո դուք չեք էկե ճերե:

Էստեղ առչն ասավ. — Այ դուլան կոծող գող աղվես, դու որ չուտես, մեր փլավն ո՞վ կուտի, ով սիրտ կանի, մեր ջաղաչը մտնի: Դու ես ճերե, լավ ես արե, հո չեզնից հաշիվ չենք պահանջում:

Աղվեսն իչքան հորթում ճերավ, որ հինքը խաբար չի, բայց ոչ մեկը չըհավատաց:

Ինչ գլոխ ցավցնեմ, փլավը ճերան ու պարկան քնան: Եփ քնից զարթնան, սկսեցին ամեքը հիրա գլխի էկածը, դա՛րդ ու ցավը նաղլ անել:

Աղվեսն ասավ. — Էս մեր ավերակ ջաղաչից էն յանը մե հուրիչ խին ջաղաչ էլ կա: Էս ջաղաչի քարը բանցըրնում ու ցածրնում ա: Էս քարի տակը մե շարան ոսկի կա: Եթե ես կարողանի էտ ոսկին խանի, կըկապի պոչիս, զնգզնգալեն էս սարերը ման գքի, էն վախտը իմ քեֆին էլ քեֆ չէր խասնի: Ինչքան խարս ու ախճիկ կար, ընձի կըբախլենք: Ես էլ ինատու ընդոնց բոլորը ման գքի, ոսկիքը կըզնգզնգցնի, թո ընդոնք հա պաղոեն, ճղվեն:

Վարդանը լաց:

— Է՛տ էր քո ուզածը, — խարցեց ջելը:

— Ո՛ւա՛, — ասավ աղվեսը:

— Անխե՛լք աղվես, բա ասում ես, որ դու խորամանկ ես, գլխիտ մեչ հեչ խելք չըկա, — ասավ ջելը, — ոսկիքը որ պոչիտ կապես,

զնգզնգացնես, չները կըլսան, հետեիցս կըհընգնեն, կըբռնեն, մե լավ կըզգեն: Այ հիմա լսա՛ իմ պատմութիւնը, —ասաւ ջելը:

—Մեր էս սարերում մե չորան կա, էն, որ սե շուն ունի: Էտ սե շունը ջելերի թշնամին ա: Ինչ ջելի բռնեց, կըխեխտա: Հախու էտ սուրուլին մոտ չենք էթում: Էս շան սրտի արունը դեղ ա:

Մեր երգրի թաքավորի ախճիկը խիվանդ ա, եթե իրեք օր էլ օքնության չըխասնեն, ախճիկը կըմեռնի: Թաքավորը հայտարարեր ա, որ ով հիրա ախճկան լավացնա, ախճիկը կըտա լավացրողին, թաքավորության ձեսն էլ ջհեզ կըտա: Հազար հեքիմ ա հավաքե, չեն կանում սաղացնեն:

Եթե ես մարթ ի հելե, կէթի էս չորանի շունը կառնի, կըմորթի, սիրտը կըխանի, արունը կըքամի ախճկա բերանը, կըլավացնի, կառնի ընձի կնիկ կըդառցնի, թաքավորության ձեսն էլ ընձի կըլնեք, այ էն ժամանակ քեֆ կանի, չե պես հազար աղվես կըպախի: Դե հիմի ասա, վի՞ր դարդն ա շատ:

Վարդանը լսաց:

Առչն ասաւ. —Ես ձեր նման չատախոս չեմ:

Թաքավորի էն մեծ բաղը որ կա, չորացեր ա: Էտ բաղի տակը էրկու մետր խաստ չերտով ոսկի կա: Ծառի արմատները հենց ոսկուն են խասնում, չորանում են: Եթե ես մարթ հըլնի, կէթի ջելի ասած շանը կըսպանի, կըտանի թաքավորի ախճկան կըլավացնի, էտ բաղը կառնի, ոսկին կըհանի, թաքավորի պալատից լավ պալատ կըչիւնի, ոսկու մե մասը կըտի չըսիւր-չուսուրին, ես էլ կաբրի, հիրանք էլ: Դուք մենակ ձեր փորի մասին եք մտածում, ախկտի հալը հեչ չեք խառցնում:

Վարդանը լսաց:

Էս խոսալուց հետո իրեքով էլ հելան, մոթմոթալով գացին սար ու ձոր ման գալու:

Վարդանը կամաց օղումից դուս էկաւ, հիշկաց, տեսաւ իրեքն էլ սարը շուռ էկան էն կողմը: Գնաց աղվեսի ասած խին ջաղաչի կողմը, տեսաւ, որ դուզը, ջաղացի քարը բանցրնում ա, ցածրնում ա, տակը մե շարան ոսկի կա: Գնաց ծառից մե ձուղ կդրեց, չանգալ արաւ, չանգալը քցեց, քարի տակից ոսկին խանեց, լցեց ջեը ու գնաց թրա չորանը: Ուսաւ չորանին, բարե տվեց, բարե առաւ:

Չորանն ասաւ. —Արի կաթ կլթեմ, ձե՛ր:

Վարդանը չորանին ասաւ. —Ախպե՛ր, բեր էտ սե շունը ծախա՛ ընձի:

Չորանը ծծղաց ու ասաւ. —Ախպե՛ր, հո խելքդ չե՞ս թոցրե, չորանը չո՞ւն կըծախա:

Վարդանը չորբանին ասավ, որ քսան ոսկի կըտա շան գինը, եթե չորբանը չունը տա: Չորբանը ոսկու անունը լսելուն պեստ, հոժարացավ, չունը տվեց:

Վարդանը շանն սպանեց, սիրտը խանեց, փաթթեց մե շորի մեջ ու հընգավ ճամբա թբա թաքավորի քաղաքը: Գնաց, խասավ պալատը, նստեց էլչու դաշին:

Թաքավորը ակուշկից տեսավ, մարթ հղրկեց, հիմանան, թե էտ մարթն ի՞նչ ա ուզում: Թե ողորմություն ա ուզում, ողորմություն տան:

Թաքավորի ծառան էկավ ու խարցրեց.—Մեր թաքավորն ասում ա ի՞նչ ես ուզում:

Վարդանն ասավ.—Գնա թաքավորին ասա՛, որ ես էկել եմ թաքավորի ախճկան լավացնեմ:

Ծառան գնաց և թաքավորին ասավ, թե ինչ է ասում Վարդանը:

Թաքավորը լաց ու դժուր ախ քաշեց ու ասավ.—Ախճկա սիրտը անջաղ տրփում ա, հեսա կըմեռնի, էլ ի՞նչ լավացնել:

Հրաման տվեց, Վարդանին կանչեցին:

Վարդանը ներս մտավ, իրեք անքամ թաքավորին գլոխ տվեց, ձեռները դրեց կրծքին ու լուռ կայնավ, ձեն չըխանեց:

Թաքավորն ասավ.—Ի՞նչ ես ուզում, տղա՛, դու ուզում ես իմ ախճկան լավացնե՞ս, անջաղ սիրտը տրփում ա:

—Թաքավորն ապրած կենա,—ասավ Վարդանը,—ես խոսք եմ տալում, որ ախճկատ լավացնեմ, դու էլ քո խոսկի տե՞րն ես, ախճիկտ ընձի կըտա՞ս:

Թաքավորն ասավ, որ ինքը հիրա խոսկի տերն ա:

Վարդանն ասավ.—Թաքավորն ապրած կենա, ախճիկտ ընձի տաս, չըտաս, ես կըլավացնեմ, հըմա լավ կըլնի, մե թուխտ գրես, տաս դնեմ ջբես: Իմ ուզածն էս ա. ախճկատ լավացնեմ, դրա փոխարեն դու ընձի տաս քո ախճիկը, խին բաղը, որ չորցեր ա, մե կաշու չափ էլ տեղ բաղի մոտից:

Թաքավորը վագիրին կանչեց, թուխտ գրեցին, տղեն դրեց ջբըր ու ասավ.—Բերեք էրկու հոքու՝ իրեք օրվա ուտելիք, դուռը փակե՛ք վրես: Իրեք օր կըմնամ ախճկա օթաղը, ոչ մեկը իրավունք չունի տենալու, թե իմալ եմ բժշկում, իրեք օրից ետո դուռը բացեք, ձեր ախճիկը սաղ, սալամաթ ստացեք:

Ճար չըկար, էտենց էլ արին: Հըմա թաքավորը դռան ու ակուշկի մոտ պահակ կայնցրեց, որ հանկարծ բժիշկը չըխափա ու փախնի:

Պահակները դռան ճղանգից, բալնրսի տեղից հիշկացին, տեսան, որ բոխկը տորերակից խանեց մե սև բան, քամեց ախճկա բերանը, ախճիկը աչկերը բացեց: Իրեք սհաթից ետո էլ կրկնեց, ախճիկը հելավ նստավ:

Հիրիկվա յան էլի էտ դեղից քամեց, ախճիկը խոսաց, կայնավ ոտի վրա, բժշկին խարցրեց. — Դու ո՞վ ես, ես որտե՞ղ եմ:

Բժիշկն ամեն բան մանդրամասն ասավ, թե ախճիկն ինչ դրու-թյան մեջ էր, և նշանց տվեց թաքավորի տված թուխտը:

Ախճիկը կարթաց, տեսավ թխտի վրեն հիրա խոր փեճատն ա, հավատաց, դառցան մարթ ու կնիկ, փաթթվան հիրար ու պարկան քնան:

Պահակները թաքավորին խաբար տարան, թե. — Աչկտ լո՛ւս, թաքավո՛ր, ախճիկտ լավացավ, տղի խետ փաթթվան ու քնան:

Թաքավորը էկավ, դռան ճղանգից հիշկաց տեսավ՝ ախճիկը թեք քցե տղի վզովը, պարկեր ա, զիբարը բացվեր ա, էնքան ու-րախ ա:

Փարք տվեց Աստծուն ու գնաց հիրա դիվանխանին: Իրեք օրը թմնավ, Վարդանն ու թաքավորի ախճիկը թև թևի տված ախճ-կա օթաղից դուս էկան: Վարդանն իր քոչոտ չորերով, թաքավորի ախճիկը պլպլան չորերով: Դուզը գնացին թաքավորի դիվանխա-նեն, թաքավորին գլուխ տվին ու կայնան: Թաքավորն ու թաքու-հին էկան, ախճկան պաչեցին, օրհնեցին էրկուսին էլ: Վարդանին բաղնիք հղրկեցին, լողացրին, թաքա չորեր խաքցրին, օխտն օր, օխտը քչեր խառնիս արին, ուրխցան: Էնենց էլ դուք ուրխնաք:

Ետ մե շափաթն հրնցավ, Վարդանը գնաց, թաքավորին գլուխ տվեց, ասավ. — Թաքավո՛րն ապրած կենա, ես ուզում եմ իմ կնիկն առնեմ էթամ չոր բաղի հնձանում ապրեմ:

— Ձէ՛, Վարդա՛ն ջան, — ասավ թաքավորը, — ես էտ բաղի մեջ լավ ամարաթ չինել կըտամ, էտ չոր ծառները խանել կըտամ, թա-գա բաղ կըքցեմ, հետո կէթաք:

Վարդանը թե՛ չէ՛, թաքավո՛ր, ես հիմա եմ ուզում էթամ:

Թաքավորը շատ ասավ, Վարդանը չիչ խասկցավ:

Տեսավ, որ հնար չըկա, Վարդանին խոսկ խասկցնել չի հըլնում, ասավ. — Դու՛ քո գլուխը, ինչ ուզում ես, արա՛:

Վարդանը կնգան առավ գնաց հնձանը: Բազառից էրկու քլունգ ու բախ առավ, քչերը կնգա խետ փորեցին, խասան ոսկու չերտին: Տասը մեշոք ոսկի խանին, էլի տեղը ծածկին, ու միյուս օրը Վար-դանը գնաց մե ջոչ գոմչի կաչի առավ, տարավ բոչեքը սրիմ քաչին, էս սրիմով թաքավորի լավ խողերը չըջապատեց: Ուրբարը տարան

Թաքավորին, թե՛ Թաքավո՛ր, քո փեսեն չեզի խափեց, մե կաշու չափ տեղ ուզեց, հըմա կաշին սրիմ ա քաչե, քո անտառներն ու լավ խողերը չըջապատեր ա: Թաքավորը ծծղաց, հըմա բան չասավ:

Տղեն հայտարարեց, որ հիրանը պետք ա խինգ հազար պատ չարող ուստա ու բանվոր, խինգ խա՛րիր դուրգա՛ր, խինգ խա՛րիր սվաղչի ամարաթ ա չինում:

Ուստեքին օրական տալում ա մե ոսկի, ֆայլեքին՝ կես ոսկի: Աշխարքը Թափավ էկավ, ամարաթը չինեցին, Թաքավորի ամա-րաթից էլ լավը: Ոսկը գնաց, Թաքավորի ամարաթին ծասկեց: Եփ ամարաթը չինեց պրծավ, մեծ քեֆ ու ուրախություն արավ, բոլոր ախկատներին քեֆի կանչեց, ամեն մեկին տասը ոսկի տվեց փեչ-քեչ:

Դրանից հետո Վարդանն ու Թաքավորի ախճիկը էս պալատի մեջ ուրախ ջյանք վարեցին:

Վարդանը գնաց հիրանց գեղը, մորը բերեց հիրա մոտը: Թաքա-վորի ախճիկը մորը լողացրեց, գլխի ոչիլները քթվեց, Թամզցուց:

Ժողովուրդը շատ գոհ էր Վարդանից: Թաքավորն ու Թաքուհին էլ շուտ-շուտ գալում ին հիրանց փեսին ու ախճկան տենալու:

Օրերից մե օր Վարդանը թեք քցած Թաքավորի ախճկա թեփն ման էր գալում: Մեկ էլ տեսավ հիրա խին հընգերին՝ Զաքարին: Հինքը Զաքարին ճանչցավ, հըմա Զաքարը Վարդանին չըճանչցավ:

Զաքարին կանչեց հիրա մոտ, խառցրեց.—Անունտ ի՞նչ ա:

—Զաքար ա, աղա՛ ջան:

—Ի՞նչ ես անում:

—Ֆայլություն եմ անում:

—Օրական ինչքա՞ն ես առնում:

—Օրը մե արասի:

—Արի գնանք, ես շատ գործ ունեմ, կըտամ օրը մե ոսկի:

Զաքարն հընգավ Վարդանի ու Թաքավորի ախճկա հետևից ու գնաց ամարաթը:

Ամարաթը խասան, թե չէ, Վարդանը պովրին ասավ, որ Զաքարին լավ կերակրի, բաղնիք տանի, լավ շորեր հագցնի, վաղը բերի հիրա մոտ:

Զաքարը մնաց զարմացած: Լիզուն բռնվավ, խոսալ էլ չըկառ-ցավ, պովրի հետևից գնաց:

Վարդանը ոնց որ ասել էր, պովրն էտ բոլորը կատարեց:

Միյուս օրը Վարդանը Զաքարի խեստ ճաչեց, հըմա Զաքարը էլի չըճանչցավ:

Էս տեսակ Զաքարին մե չափաթ պախում ա, չի աշխատաց-նում, օրական մե ոսկի էլ տալում ա:

Եփ մե չափաթը թմմավ, Զաքարը էլ չըհամփերեց, ասավ.— Աղա՛, էս ինչ բան ա, դու ընձի թաղա չոր խաքցրիր, էս մե չափաթ ա թաքավորի վայել պախում ես, օրը մե ոսկի տալում ես: Էստեղ մե բան կա:

Վարդանն ասավ.— Հեչ բան էլ չըկա, ինչքան ուզում ես, իմ տանը մա՛ց, ես քեզի օրական մե ոսկի կըտամ:

Զաքարը թե՛ չէ՛, որ չէ՛, գաղտնիքը բղի ասես:

Վարդանը Զաքարին ասավ, որ Հիրանք խին ծանոթ են, որ Հինքը էն տղեն ա, որ գարե գընդը ձերան:

Զաքարն Հիչեց Հիրա արածը, կարմրավ, բան չասավ, վեր կացավ ու սուսուփուս գնաց դուս:

Գնաց, մե չիչ հետո էլի էկավ:

—Աղա՛, բա ո՞նց հելավ, որ դու էսքան հարուստ դառցար:

Վարդանը բոլորը մանդրամաս պատմեց՝ սկսած խանի մեչ խռովելու հրուպեից չընի էտ բոպեն:

Զաքարը լսեց ու գլխը կախեց: Հետո վեր կացավ, առանց մնաս-բարովի, առանց չնորհակալություն հայտնելու, բռնեց Հին ջաղաչների ճամբեն ու ձեսօրին տեղ հասավ:

Ճամբին Հինքն Հիրան միտք էր անում. «Էս մարթը, որ մե չիչ փլավ ձերավ, էսքան հարստացավ, ես փլավի կեսը կուտեմ, թե կանամ, հըմմեն կուտեմ, էնքան հարուստ դառնամ, որ Վարդանն իմ ձեռներին ջուր լցա»:

Մտածեց, որոշեց ու մտավ ջաղաչը:

Տեսավ՝ փլավը պաղրաստ ա: Ճեսը ձերավ ու մտավ օղումը: Մեկ էլ տեսավ գելն, առչը ու աղվեսը մոթմոթալով ներս մտան, տխուր նստան: Հետո աղվեսը վեր կացավ, փլավը բերեց, որ ուտեն, տեսավ՝ փլավի ձեսը ձերած ա:

Ասավ.— Ախպերնե՛ր, էն անքամ ես ասի, որ մեր փլավը ձերած ա, չըհավատացիք: Մենք նստանք մեր դարդը պատմինք, էտ օրվանից ջաղաչի քարի ոսկիներն էլ տարան, չոբանի չունն էլ տարան, թաքավորի ախճիկն էլ տարան, բաղին էլ տիրացան, էստեղ անպաճառ լրտես կա: Դուք կայներ դռան հառաչը, չըփախնի, ես ջախսաչն ստուգեմ:

Աղվեսն ստուգեց ու Զաքարին քթավ: Դրեցին մեչտեղ ու գզեցին: Վատ մարթի ճամբեն կարճ ա: